| | | | |
|---|---|---|---|
| Թիւ հաստատուն անդամոց | 11 | Թիւ աշակերտաց երկուց գըպրոցաց | 165 |
| Թիւ ժամանակաւոր անդամոց առաջին կարգի | 20 | Թիւ աշակերտուհեաց | 63 |
| Երկրորդ կարգի | 16 | Թիւ ուսուցչաց | 4 |
| Թիւ փոխանական անդամոց առաջի կարգի | 17 | | |
| Երկրորդ կարգի | 23 | | |
| Երրորդ կարգի | 23 | | |

Նախագահ Յարութիւն Մաճկնեան
Գանձապահ Պօղոս Գալֆայեան
Հոգաբարձուք Մարտիրոս Աքրէլեան
Խաչատուր Բաղդասարեան
Տեսուչ Կարապետ Տէր Իսահակեան
Քարտուղար Հայրապետ Խաչատրեան

## ՈՉ ՈՔ.

Նայեցէ՛ք, մարդիկ, հիւանդ թալկած կին,
Ցմահ չարչարված իւր զաւակներով,
Անցնում է կծոծ ողբով լալագին
Մեծամեծների պալատի մօտով.
Տառապեալ հիւանդ կընոջ յետևից
Վազում են կծող չներ խմբովին,
Ջուր է կամենում մայրը նոցանից
Պաշտպանել սիրած իւր զաւակներին.
Նա հեռացնելու կատաղի չներ
Չունի ոչինչ ոյժ, մինչդեռ անտարբեր
Լուսամուտներից բազմաթիւ գլուխներ
Նայում են կընոջ թշուառ և անտէր,
Ընչասպառ զրուցթեան չէ գթում ոչ ոք,
Դեռ գրգռում են չըներին մարդիկ.—
Քո տագնապ, տանջանք այսպէս չեն արդեօ՞ք,
Իմ բազմաչարչար զոհված հայրենիք . . .

Իշխան Բագրատունի.

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Վեհափառ Կաթողիկոսն Կալկաթացի արժանայիշատակ Սողոմոն Պապէի կտակի և կտակաւանդ դրամների մասին հետևեալ անօրինութիւն բարեհաճեց անել իւր Հայրապետական Կոնդակով, որի պատճէնը կզետեղենք ահա այստեղ.